

**Մայր Արոռ Սուրբ էջմիածնում
Ամենայն Հայոց Կաթողիկոսն
Օրինեց Սրբալոյս Միւռննը**

**Սեպտեմբերի 28-ը նշանակալից
օր էր Հայ Առաքելական Սուրբ Եկեղեց-
ուու եւ աշխարհասփիւո հայ ժողովրդի
կեանքում, ժանզի Մայր Արոռ Սուրբ
էջմիածնում տեղի ունեցաւ 21-րդ դարի
երկրորդ Միւռնօրինէքը:**

Վարագայ Ս. Խաչի տօնի առա-
ւոտեան, հանդիսապետութեամբ
Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Մայրագոյն
Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կարո-
ղիկոսի եւ ներկայութեամբ Կոստանդ-
նապոլսի Տիեզերական Պատրիարք Նո-
րին Ամենասրբութիւն Բարբուդիմէոս
Ա-ի եւ Միւռնօրինութեան առիթով Ս.
էջմիածին ժամանած թեմակալ առաջ-
նորդների, ազգային բարերարների, բոյր
Եկեղեցիների ներկայացուցիչների,
ուխտաւոր բազմահազար հայորդիների,
հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցուեց
Միաձնաէջ Մայր Տաճարում: Պատար-
գիչն էր Յունաստանի հայոց թեմի առաջ-
նորդնորդ Տ. Ռուկան Արքեպաս. Գալիքա-
եանը: Յընթաց Ս. Պատարագի Սրբ-
ան Հայրը յաւուր պատշաճի բարող
խօսեց:

Ս. Պատարագի աւարտին Միւ-
ռնի կարսայի առջեւ կատարուեց Ժի-
րահիւղի օրինութեան վերջին աղօրէք,
որից յետոյ Մայր Տաճարի զանգերի
դոլանշների, ինչպէս նաև սաղմունների
եւ շարականների երգեցողութեան ներ-
փոյ Սրբալոյս Միւռնի կարսան տեղա-

փոխուեց Ս. Տրդատի բաց խորան: Երեկոյեան ժամը 17.00-ին,
Մայր Արոռի Ս. Տրդատի բաց
խորանում, տեղի ունեցաւ Միւռնօրի-
նութեան նուիրական արարողութիւնը:
«Հրաշափառի» երգեցողութեան եւ
Մայր Տաճարի զանգերի աւետարեր
դողանշների, հազարաւոր հաւատացեալ-
ների բազմութեան ծափողչիւնների
ներքոյ Հայրապետական շինաշում բա-
փորը՝ խաչվանների եւ խաչերի առաջ-
նորդութեամբ Մայր Տաճարից շարժուեց
դէպի բաց խորան: Հայրապետական
ամպիկանու ներքոյ Հայոց Հայրապե-
տի հետ բայլում էին ՀՀ նախագահ
Տիգրան Սարգսյանը եւ Նորին Ամե-
նասրբութիւն Բարբուդիմէոս Ա. Կոս-
տանդնուպոլսի Տիեզերական Պատրիար-
քը: Վեհափառ Հայրապետի ընթերական-
ներն էին Մեծի Տաճն Կիլիկիոյ Կարո-
ղիկոսութիւնից՝ Տ. Օշական Արք. Չոլո-
յանը եւ Երուսաղէմի Հայոց Պատրի-
արքութեան լուսարարապես Տ. Նուրիան
Արք. Մանուկեանը: Հայրապետական
բափորի մէջ Միւռնօրինութեան արա-
րողութեան ժամանակ գործածուող սըր-
րազան մատունքները, սրբութիւնները
եւ Միւռնի նիւթերը կրում էին Կոս-
տանդնուպոլսի Հայոց Պատրիարքու-
թեան ներկայացուցիչ Տ. Շահան Արք.
Ավանեսյանը, Ֆրանսիայի հայոց թեմի
առաջնորդ Տ. Նորվան Արք. Զաքարեա-

նը, իրավի հայոց քեմի առաջնորդ՝ Տ. Աւագ Արք. Ասատուրեանը, Քրազիլիայի հայոց քեմի առաջնորդ՝ Տ. Տարել Արք. Ղարիպեանը, Արցախի հայոց քեմի առաջնորդ՝ Տ. Պարգևի Արք. Մարտիրոսեանը, ԱՄՆ Արեւելեան հայոց քեմի առաջնորդ՝ Տ. Խաժակ Արք. Պարսամեանը, ԱՄՆ Արեւմտեան հայոց քեմի առաջնորդ՝ Տ. Յովհան Արք. Տէրտէրեանը, Գերմանիայի հայոց քեմի առաջնորդ՝ Տ. Գարեգին Արք. Բեթեանը, Արարատեան հայրապետական քեմի առաջնորդական փոխանորդ՝ Տ. Նաւասարդ Արք. Կենյեանը, Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց քեմի առաջնորդ՝ Տ. Գեղարդը, Կենաց Խաչը՝ Տիրոջ խաչափայտի մասունքով, եւ Ս. Գրիգոր Լուսաւորչի Աջը՝ Նորին Սրբութեանը քաց խորանում սպասաւորում էին Մայր Արքողի լուսարարապետ՝ Տ. Արարատ Եպս. Գալքագնեանը, Մայր Արքողի դիւանապետ՝ Տ. Արշակ Եպս. Խաչատրեանը եւ Երեւանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Եկեղեցու հոգեւոր տեսուչ՝ Տ. Անուշաւան Եպս. Ժամկոչեանը:

Ս. Տրդատի քաց խորանում Միւռոնօրինէքը սկսուեց միասնական «Տէրունական աղօթքով»: Մրազան Հայրեն ընթերցեցին հատուածներ Հին եւ Նոր Կտակարաններից, ինչպէս նաև աղօթքներ՝ նորիրուած Ս. Միւռոնին: Նորին Սրբութիւնը ճախ Միւռոնի կաթոսայի մէջ լցրեց 40-ից աւել ծաղիկներից պատրաստուած հիւրը, ապա քալասանը: Քուվէյրում եւ Արարական Միացեալ էմիրութիւններում կարողիկոսական փոխանորդ Տ. Կորիւն

Արք. Պապեանը, ի նշան հայոց Եկեղեցու միասնականութեան, Ամենայն Հայոց Կարողիկոսին փոխանցեց Անքիլիասում օրինուած նոր Միւռոնը: Մրազան Աւանդութեան համաձայն՝ Ամենայն Հայոց Հայրապետը նոր միւռնին խառնեց նաև հինը՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռովով օրինուած սրբալոյս Միւռոնի գօրութիւնը փոխանցելով նորին:

Ապա Վեհափառ Հայրապետը նոր Միւռոնը տեսանազրեց եւ օրինեց Կենաց Խաչով, Աստուածամուխ Ս. Գեղարդով եւ Հայոց հաւատի Հայր Ս. Գրիգոր Լուսաւորչի Աջով:

Մրազան արարողութեան ընթացքում նորին Սրբութիւնն իր Հայրապետական պատգամն ուղղեց համայն հայութեանը՝ անդրադառնալով մեր ժողովրդի եւ Եկեղեցու կեանքում Ս. Միւռոնի խորիրդին եւ նշանակուանը:

«... Աստուծոյ քարերար Կամքով սուրբ եւ սրբարար է միւռոնը: Լուսանիւր, անուշարոյր միւռոնով սրբում են Եկեղեցիները, դառնում՝ Աստծոյ տուն: Միւռոնով օծուելով՝ Եկեղեցականները կոչւում են Տիրոջ Սուրբ Սեղանի սպասաւորութեան: Ծնորհակիր եւ շնորհարաշին միւռոնով մկրտութեան աւագանից ծնւում ենք որպէս Աստծոյ սեփական ժողովուրդ, որպէս Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցի: Սուրբ միւռոնի դրոշմով ճանաչում, ապրում, զգում եւ պահպանում ենք մեր հայ եւ Տրիստոնեայ ինքնութիւնը, մեր ազգային ամբողջականութիւնը: Միւռոնայրոշմ յաղթել ենք վասն հաւատի եւ վասն հայրենեաց կենաց եւ մահու մեր բոլոր պատերազմները, մեր գոյութեան եւ լինելութեան բոլոր մարտերը: Միւռոնի գօրութեամբ ու լոյսով միաւորել եւ միաւորում ենք մեր

անցեալը, ներկան եւ մեր զաւակների
ապագան:

Միւռոնօրինութիւնը, սիրելի հայորդիներ, կոչ է եւ հրաւեր ազգիս՝ մնալու սրբութեան շնորհի մէջ, մերժելու չարն ու չարի գործերը եւ մեր կեանքում անստուեր պահպանելու Տիրոջ Աւետարանի լոյսը։ Միւռոնօրինութիւնը պատգամ է ապրելու Քրիստոսով, ընթանալու Քրիստոսի հետ, բանցի սուրբ միւռոնով ի Քրիստոս մկրտուած Քրիստոսով հանդերձաւորուեցինք (հմմտ.՝ Գաղ. Գ 27): Տիրոջ հետ, տէրունապարգեւ սիրով միայն պիտի գերակայեն մեր կեանքում բարութիւնն ու արդարութիւնը, մեր սրտերի մէջ անսասան ու անրիծ պիտի մնայ մեր հայրերի սուրբ հաւատքը եւ մեր ուղին լինի բազմարդիւն ու բարեյոյս։

Այսօր մենք՝ Հայրապետ հայոց,
բաշալեր ենք ու լաւատես, իի՝ ապագայի
յոյսերով, բանզի Հայաստան եւ Արցախ
մեր հայրենի աշխարհում, վերագար-
քոնք ապրող մեր Եկեղեցու մէջ, մեր
անկախ պետական կեանքում, բայց
մանաւանդ մեր ժողովրդի առողջ
հերաշխարհում մենք զգում եւ
տեսնում ենք արքանցող եւ հասունա-
ցող կամքն ու պահանջը մաքրուելու,
սրբուելու, արդար հասարակութիւն եւ
պետութիւն կառուցելու: Տեսնում ենք
կամքն ու պահանջը ամոնելու ազգային
վկրքերը, յաղքահարելու Եկեղեցական
մեր կեանքի դժուարութիւնները, ժամա-
նակի բերած բաժանումներն ու տարա-
կարծութիւնները, որպէսզի հայոց ան-
դաստանում միշտ եւ առյաւէտ լինենք
մէկ եւ միասնական՝ մէկ ազգ, մէկ
հաւատք, մեկ Եկեղեցի՝ միասնական
Հայրենիքով եւ միակամ ու միախոր-
հուրդ ընթանանք դէպի նոր ձեռքբ-
րումներ, մեր արդար իդաբրի ու արժա-
ցի նպատակների իրագործման Աստու-

ծոյ կողմից նախամուած բարի
հանգուաններ:

Ժողովուրդ հայոց, ժողովուրդ
շնորհընկալ եւ յաղթական, որ դարեղար
ապրածդ կեանենով, սիրալի վկայութիւն-
ներով հաւատարիմ ես Ա. Էջմիածնով
Աստծոյ հետ հաստատած ուխտիդ,
հանապազ նորոգուիր հաւատենով, պայ-
ծառացիր եկեղեցաշէն եւ հայրենանուէր
գործոց արդար ու բարի արգասիքներով,
որ Աստծոյ օրինութեան ներփոյ յաւէրժ
անսասան մնայ Քրիստոսապսակ Մայր
Աբով Սուրբ էջմիածինը, միշտ ապրի
ազատ ու ինքնիշխան, Արարատով
յաւէրժ բագադրեալ մեր հայրենիքը,
եւ հայ կեանքը լոյսով նայի զալիքին»,
նշեա Նորին Սրբութիւնը:

Իր ողեշունէ պատգամում Նորին
Սրբութիւնն ողջունեց ներկայութիւնը
ՀՀ նախագահ Տիգրան Մերժ Մարգարեանի,
Լեռնային Ղարաբաղի Հանրապետու-
թեան նախագահ Տիգրան Բակո Մահակեա-
նի եւ հայոց պետական աւագանու:
Ամենայն Հայոց Կարողիկոսը նաև իր
եղայրական ողջունները յլեց Հայ Եկե-
ղեցու Նուիրապետական Արքուների
Գահակալներին՝ Ն. Ա. Օ. Տ. Տ. Արամ Ա.
Մեծի Տանն Կիլիկիոյ Կարողիկոսին,
Երուսաղէմի Հայոց Պատրիարք՝ Ամենա-
պատիւ Տ. Թորգոն Արք. Մանուկեանին
եւ Կոստանդնապոլսի Հայոց Պատրիարք՝
Ամենապատիւ Տ. Մեսրոպ Արք.
Մուրաֆեանին՝ հայցելով իրենց
կեանքին Տիրոջ օրինութիւնն ու
զօրակցութիւնը:

Վերջում Հայոց Հայրապետը
շնորհակալութիւն յայտնեց Իոյր Եկեղե-
ցիների, Էկումենիկ եւ միշագօքային
կազմակերպութիւնների ներկայացուցիչ-
ներին, որ իր հրաւերին ընդառաջ՝ Ա.
Էջմիածին են ժամանել՝ մասնակցելու
Հայոց Եկեղեցու Միոպնօրհնութեան
նուիրական արարողութեանը՝ իրենց

զօրակցութիւնն ու եղբայրական սէրը արտայայտելով Հայ Առաքելական Եկեղեցու հանդէպ: Ապա նորին Սրբութիւնը Ս. Խորան հրաւիրեց Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարքին: Ամենայն Հայոց Հայրապետը եւ նորին Ամենասրբութիւնը ներկաներին օրհնեցին Ս. Գրիգոր Լուսաւորչի Աջով եւ Ս. Գեղարդով:

Այնուհետեւ Մայր Արոռի լուսարարապետ՝ S. Արարատ նպա. Գալքագչեանը հրաւիրեց Միւռոնօրինութեան կնքահայր, Մայր Արոռի բարերար Տիար Սարգիս Պէտէվեանին՝ համրութելու Ս. Միւռոնի կաթոսան եւ ստանալու Սրբալոյս Միւռոնի օրհնութիւնը:

Արարողութեան աւարտին հայրապետական հանդիսաւոր բաֆօրը հայրապետական մաղթերգի ներելոյ հաւաքուած հոծ բազմութեան միջով ուղղուեց դէպի Մայր Տաճար:

Միւռոնօրինութեան սրբազն արարողութեանը նաեւ ներկայ էին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսեանը, Սահմանադրական Դատարանի նախագահ Գագիկ Յարութիւնական անդամնութեան անդամներ, ԱԺ պատգամաւորներ, ազգային բարերարներ, մըշակոյրի եւ գիտութեան գործիչներ եւ բազում ուժտաւոր հայորդիներ: Սրբազն արարողութեանը բոյր Եկեղեցինե-

րից ներկայ էին Օրէնքուրգի եւ Բուզուրսկի Վալենտին միտրոպոլիտը՝ Ռուս Ուղղափառ Եկեղեցուց, Հռոմէական Կարողիկ Եկեղեցու պատուիրակութիւնը՝ զլիաւորութեամբ Արեւելեան Եկեղեցիների Քահանայապետական Կոնգրեգացիայի պրեֆեկտ՝ կարդինալ Լեռնարդո Սանդրիի, Բենիամին նպա. Մենուֆին՝ Ղպտի Ուղղափառ Եկեղեցուց, Եւստարիս Մարա Ռոհամ միտրոպոլիտը, Ասորի Ուղղափառ Եկեղեցուց, Ամենայապետական Կոնգրեգացիայի պրեֆեկտ՝ կարդինալ Լեռնարդո Սանդրիի, Բենիամին նպա. Մենուֆին՝ Ղպտի Ուղղափառ Եկեղեցուց, Եւստարիս Մարա Ռոհամ միտրոպոլիտը, Ասորի Ուղղափառ Եկեղեցուց, Հնդիկ Մալանկարա Եկեղեցու պատուիրակութիւնը՝ զլիաւորութեամբ Թումաս Արանասիուս միտրոպոլիտի, Գերասիմ միտրոպոլիտը Վրաց Ուղղափառ Եկեղեցուց, Ամելիխան Եկեղեցուց՝ Զեռֆրի նպա. Ռատուէլը, ինչպէս նաեւ ներկայացուցիչներ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդից, «Կրօններն աշխարհում խաղաղութեան համար» կազմակերպութիւնից, Զմմառի Կարողիկ Հայոց Պատրիարքութեան ներկայացուցիչ՝ S. Վարդան նպա. Աշխարհանը եւ Միիրարեան Միարանութեան վանահայր՝ Հայր Եղիա Քիլաղիանը:

Մինչեւ ուշ երեկոյ աշխարհի չորս ծագերից ժամանած բազում ուխտաւոր հայորդիներ շարունակ այցելում էին Մայր Արոռ՝ հպուելու Ս. Միւռոնի կաթոսային եւ ստանալու նոր Միւռոնի օրհնութիւնը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. Էջմիածին